

Մասնագիտության նկարագիրը	
Պաշտոնի /գբաղմունքի/ անվանումը	Փականագործ՝ գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների նորոգման
I. Դերը	Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների հանգույցների, մեխանիզմների, ագրեգատների, սարքերի և այլ սարքավորումների հավաքելը, մոնտաժելը, կարգավորելը, փորձարկելը, նորոգելը, հարմարացնելը և սպասարկելը:
II. Խնդիրների բնագավառները՝	
	<ul style="list-style-type: none"> • Հավաքել և կարգավորել գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ, • բացահայտել գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործման ժամանակ առաջացած անսարքություններ, • նորոգել գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների հանգույցներ, մեխանիզմներ, ագրեգատներ, սարքեր, վերացնել նորոգման ժամանակ առաջացած անսարքություններ, • գործարկել և լրահավաքել նոր սարքավորումներ, • ստուգել և փորձարկել բեռնավորված վիճակում, վերանորոգված մեքենաներ և սարքավորումներ, • կազմել անսարքություններին և վերանորոգմանն առնչվող փաստաթղթեր:
Խնդիրների բնագավառ 1. Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների հավաքում և կարգավորում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • Նախապատրաստում է աշխատանքային տեղը, • ծանոթանում է հավաքման տեխնոլոգիական փաստաթղթերին, • ծանոթանում է կարգավորման տեխնոլոգիական փաստաթղթերին, • ընտրում է համապատասխան գործիքները, հարմարանքները և սարքավորումները, • հավաքում է գյուղատնտեսական մեքենան և սարքավորումը, • կարգավորում է գյուղատնտեսական մեքենան և սարքավորումը, • սպասարկում է աշխատատեղը:
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • Աշխատատեղը և շրջակա տարածքը մաքրված է փոշուց, մետաղի խարտուրքներից, յուղի հետքերից, խոնավությունից

	<p>փականագործական գործիքները և հարմարանքները դասավորված են աշխատանքային սեղանին և նախապատրաստված են աշխատանքի համար,</p> <ul style="list-style-type: none"> • աշխատատեղը միացված է էլեկտրամատակարարման և սեղմված օդի մատակարարման արտաքին ցանցին, • ճիշտ է հասկացել հավաքման տեխնոլոգիական փաստաթղթերը, • գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների հավաքման հաջորդականությունը որոշված է ճիշտ: • գյուղատնտեսական մեքենանայի և սարքավորման կարգավորման հաջորդականությունը որոշված է ճիշտ: • գյուղատնտեսական մեքենան և սարքավորումը հավաքված են տեխնիկական պահանջներին համապատասխան, • գյուղատնտեսական մեքենան և սարքավորումը կարգավորված են տեխնիկական պահանջներին համապատասխան, • աշխատատեղը և նրա շրջակա տարածքը մաքրված է մետաղական խարտուքից, աղբից, փոշուց, խոնավությունից և յուղի հետքերից, • փականագործական գործիքները, հարմարանքները տեղակայված են համապատասխան դարակներում, • հաստոցը և սարքավորումները անջատված են էլեկտրամատակարարման և սեղմած օդի մատակարարման արտաքին ցանցերից:
<p>Խնդիրների բնագավառ 2. Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների անսարքությունների բացահայտում</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ul style="list-style-type: none"> • Ծանոթանում է և ուսումնասիրում գյուղատնտեսական մեքենանայի և սարքավորման տեխնիկական փաստաթղթերը, • բացահայտում է և ուսումնասիրում գյուղատնտեսական մեքենանայի և սարքավորման տեխնիկական անսարքությունները, • սահմանում է գյուղատնտեսական մեքենանայի և սարքավորման տեխնիկական անսարքությունների վերացման հաջորդականությունը:
<p>Կատարման չափանիշները</p>	<ul style="list-style-type: none"> • Ճիշտ է հասկացել գյուղատնտեսական մեքենանայի և սարքավորման տեխնիկական փաստաթղթերը, • գյուղատնտեսական մեքենանայի և սարքավորման տեխնիկական զննությունը և անսարքությունների

	<p>բացահայտումը կատարված է ճիշտ,</p> <ul style="list-style-type: none"> • գյուղատնտեսական մեքենայի և սարքավորման անսարքությունների վերացման հաջորդականությունը ընտրված է ճիշտ:
<p>Խնդիրների բնագավառ 3. Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների հանգույցների, մեխանիզմների, ագրեգատների, սարքերի նորոգում:</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ul style="list-style-type: none"> • Մաքրում և լվանում է վերանորոգման ենթակա մեխանիզմը, հանգույցը, ագրեգատը, մեքենամասերը, • ընտրում է համապատասխան փականագործական գործիքներ, հարմարանքներ և սարքավորումներ, • կատարում է գյուղատնտեսական մեքենայի և սարքավորման նախնական քանդում և վերանորոգման ենթակա մեխանիզմի, հանգույցի, ագրեգատի, մեքենամասի բացում և արատորոշում, • հանում է անսարք կամ վնասված հանգույցը, մեխանիզմը, ագրեգատը գյուղատնտեսական մեքենայի, սարքավորման վրայից, • քանդում է անսարք կամ վնասված հանգույցը, մեխանիզմը, ագրեգատը, բացահայտում է անսարքությունը, • կատարում է վերանորոգման հետ կապված փականագործական աշխատանքներ, • փոխարինում է անսարք կամ վնասված հանգույցը, մեխանիզմը, ագրեգատը կամ առանձին մեքենամասերը, վերացնում անսարքությունը, • հավաքում է վերանորոգված հանգույցը, մեխանիզմը, ագրեգատը • ստուգում է վերանորոգված հանգույցի մեխանիզմի, ագրեգատի աշխատանքը և ըստ անհրաժեշտության կատարում վերանորոգման շտկում , • տեղակայում է հանգույցը, մեխանիզմը, ագրեգատը գյուղատնտեսական մեքենայի, սարքավորման վրա, • հավաքում է գյուղատնտեսական մեքենան, սարքավորումը տեխնիկական պահանջներին համապատասխան:
<p>Կատարման չափանիշները</p>	<ul style="list-style-type: none"> • Վերանորոգման ենթակա հանգույցը, մեխանիզմը, ագրեգատը, մեքենամասը մաքրված և լվացված է, • փականագործական գործիքները և սարքավորումները ընտրված են, • վերանորոգման ենթակա հանգույցը, մեխանիզմը, ագրեգատը,

	<p>մեքենամասը նախնական քանդված է, հեռացված են հանգույցը այլ մեքենամասերի և ագրեգատների հետ կապող օղակները,</p> <ul style="list-style-type: none"> • անսարք կամ վնասված հանգույցը, մեխանիզմը, ագրեգատը հանված է գյուղատնտեսական մեքենայի , սարքավորման վրայից, • անսարք կամ վնասված հանգույցը, մեխանիզմը, ագրեգատը քանդված է, • անսարք կամ վնասված հանգույցի, մեխանիզմի, ագրեգատի անսարքությունը բացահայտված է, • փականագործական աշխատանքները կատարված են ճիշտ, • անսարք կամ վնասված հանգույցը, մեխանիզմը, ագրեգատը կամ առանձին մեքենամասերը փոխարինված են, անսարքությունը վերացված է, • վերանորոգված հանգույցը, մեխանիզմը, ագրեգատը հավաքված են, • վերանորոգված հանգույցի, մեխանիզմի, ագրեգատի աշխատանքը ստուգված է, հնարավոր անսարքությունները վերացված են, • հանգույցը, մեխանիզմը, ագրեգատը տեղակայված է գյուղատնտեսական մեքենայի, սարքավորման վրա, • գյուղատնտեսական մեքենան, սարքավորումը հավաքված են տեխնիկական պահանջներին համապատասխան:
<p>Խնդիրների բնագավառ 4. Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների գործարկում, լրահավաքում և տեխնիկական սպասարկում</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ul style="list-style-type: none"> • Գործարկում է գյուղատնտեսական մեքենան, • գործարկում է գյուղատնտեսական սարքավորումը, • լրահավաքում է գյուղատնտեսական մեքենան, • լրահավաքում է գյուղատնտեսական սարքավորումը, • տեխնիկական սպասարկում է գյուղատնտեսական մեքենան և սարքավորումը, լիցքավորում է գյուղատնտեսական մեքենան, սարքավորումը համապատասխան քայլուղերով, հովաքման հեղուկներով, տեխնիկական հեղուկներով և այլ անհրաժեշտ նյութերով:
<p>Կատարման չափանիշները</p>	<ul style="list-style-type: none"> • Գյուղատնտեսական մեքենան և սարքավորումը սպասարկվել է նորմատիվ-հրավական տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան,

	<ul style="list-style-type: none"> • գյուղատնտեսական մեքենան լիցքավորվել է տեխնիկական բնութագրերի պահանջներին համապատասխան քսայուղերով, հովացման հեղուկներով և այլ նյութերով, • գյուղատնտեսական սարքավորումը լիցքավորվել է տեխնիկական բնութագրերի պահանջներին համապատասխան քսայուղերով, հովացման հեղուկներով և այլ նյութերով, • գյուղատնտեսական մեքենան գործարկվել է տեխնիկական պահանջներին համապատասխան, • գյուղատնտեսական սարքավորումը գործարկվել է տեխնիկական պահանջներին համապատասխան, • գյուղատնտեսական մեքենան լրահավաքվել է տեխնիկական պահանջներին համապատասխան, • գյուղատնտեսական սարքավորումը լրահավաքվել է տեխնիկական պահանջներին համապատասխան:
<p>Խնդիրների բնագավառ 5. Վերանորոգված գյուղատնտեսական մեքենայի և սարքավորման ստուգում և փորձարկում</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ul style="list-style-type: none"> • Ստուգում է վերանորոգված գյուղատնտեսական մեքենան, • ստուգում է վերանորոգված գյուղատնտեսական սարքավորումը, • վերացնում է վերանորոգված մեքենայի և սարքավորման անսարքությունը, • կատարում է գյուղատնտեսական մեքենայի և սարքավորման վերջնական հավաքում, ստուգում և փորձարկում շահագործական պայմաններում:
<p>Կատարման չափանիշները</p>	<ul style="list-style-type: none"> • Վերանորոգված գյուղատնտեսական մեքենան փորձարկված է տեխնիկական պահանջներին համապատասխան, • վերանորոգված գյուղատնտեսական սարքավորումը փորձարկված է տեխնիկական պահանջներին համապատասխան, • հավաքման և վերանորոգման անճշտությունները բացահայտված են և վերացված, • գյուղատնտեսական մեքենան և սարքավորումը վերջնական հավաքված է, ստուգված և փորձարկված շահագործական պայմաններում, տեխնիկական պահանջներին համապատասխան:
<p>Խնդիրների բնագավառ 6. Անսարքություններին և վերանորոգմանն առնչվող փաստաթղթերի կազմում</p>	

<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ul style="list-style-type: none"> • Հիմնավորում է տեխնիկական փաստաթղթերի կազման համար ներկայացված տվյալները, • կազմում է մեքենաների և սարքավորումների նորոգման, գործարկման, լրահավաքման, կարգավորման, փորձարկման արդյունքների ամփոփման նորմատիվ փաստաթղթեր, • կազմում է ընդունման-հանձնման ակտեր օգտվելով ստանդարտներից և նորմատիվային փաստաթղթերից:
<p>Կատարման չափանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> • Տեխնիկական փաստաթղթերի կազմման համար ներկայացված տվյալները ամբողջական են և հիմնավոր, • պահանջագրերը, հաշվետվությունները, ամփոփագրերը, աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերը, հանձնման-ընդունման ակտերը, տեխնիկական վերահսկողության փաստաթղթերը լրացված և (կամ) կազմված են գործող նորմատիվ-իրավական փաստաթղթերին համապատասխան:
<p>III. Պատասխանատվություն /անմիջական պատասխանատվության շրջանակ/</p>	<ul style="list-style-type: none"> • Պատասխանատու է իր սպասարկման տեղամասում գտնվող գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների հանգույցների, մեխանիզմների, ագրեգատների, սարքերի և այլ սարքավորումների, ուժային և լուսավորման համակարգերի նորմալ և անխափան աշխատանքի, շահագործման պայմանների պահպանումն ապահովելու, սարքավորումները ճիշտ տեղակայելու, դրանց կարգավորման, նորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքները ժամանակին և ամբողջությամբ կատարելու, • իրեն վերապահված գործառույթների վերաբերյալ փաստաթղթերը և ակտերը գործող նորմատիվներին համապատասխան կազմելու , • ենթականերին և շահագործողներին անհրաժեշտ տեխնիկական օգնություն և խորհրդատվություն տրամադրելու, • նյութական միջոցները խնայողաբար օգտագործելու, աշխատանքի անվտանգության կանոնների պահպանումն ապահովելու, • համապատասխան տեղեկությունները վերադասին ժամանակին և սահմանված կարգով տրամադրելու, • ենթակաների աշխատանքը կազմակերպելու և աշխատանքային կարգապահությունը ապահովելու համար:
<p>IV. Լեզուները</p>	<p>հայերեն - գերազանց</p>

	մեկ օտար լեզու- բավարար
V. Համակարգիչը	MS Word - բավարար Internet Explorer՝ բավարար
VI. Գիտելիքները	<ul style="list-style-type: none"> • մեքենաշինական գծագրություն, • նյութագիտության հիմունքներ, • թույլտվածքներ և նստեցվածքներ, չափիչ գործիքներ եվ չափումների տեխնիկա, • վառելիքաքսանյութեր և տեխնիկական հեղուկներ, • աշխատանքի անվտանգություն և առաջին օգնություն:
VII. Կարողությունները և հմտությունները	<ul style="list-style-type: none"> • Աշխատանքում առաջադրանքների կատարման համար անձնական պատասխանատվության ստանձնում որոշ դեպքերում ավելի ցածր որակավորում ունեցող աշխատողների կողմից կատարված աշխատանքի համար պատասխանատվության ստանձնում, • խնդիրներ լուծելիս սեփական վարքագիծը հանգամանքներին հարմարեցնելու կարողություն, • համակարգչային հայտնի ծրագրերով պարզ գործողությունների կատարման կարողություն, • իրավիճակին համապատասխան մասնագիտական տեղեկություններ տրամադրելու, առկա տեղեկությունների հիման վրա եզրահանգումներ կատարելու կարողություն, • սեփական աշխատանքային կամ ուսումնառության գործընթացները՝ կանխատեսելի, բայց փոփոխունակ միջավայրում ինքնուրույն կազմակերպելու և կառավարելու, դրանց գնահատման ու բարելավման որոշ պատասխանատվություն ստանձնելու կարողություն, • աշխատանքների կատարման առավել արդյունավետ տարբերակները ընտրելու կարողություններ, • գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների նորոգման անհրաժեշտ գործիքներ ու սարքեր օգտագործելու հմտություն, • գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների պարամետրերը չափելու և հսկելու հմտություն, • գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների անսարքությունների վերացման, նորոգման, փորձարկման և կարգավորման աշխատանքներ կատարելու հմտություններ,

	<ul style="list-style-type: none"> • սարքավորումները տեղակայելու հմտություններ, • հաշվարկներ կատարելու հմտություն, • նորմատիվ փաստաթղթերից, ստանդարտներից և տեխնիկական պայմաններից օգտվելու հմտություն, • հաշվետվություններ և այլ փաստաթղթեր կազմելու հմտություն, • հստակ ուղղորդման ներքո սեփական կրթական պահանջմունքները՝ ուսումնառությունը շարունակելու համար բացահայտելու կարողություն:
<p>VIII. Անձի որակական հատկանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> • պարտաճանաչություն, • կարգապահություն, • ուշադրություն և դիտողունակություն, • վերլուծական մտածողություն, • համագործակցելու պատրաստակամություն, • հանդուրժողականություն, • նորն ընդունելու պատրաստակամություն, • հետաքրքրություն նորագույն տեխնիկայի նկատմամբ: • հասարակական համակեցության կանոնների պահպանում և քաղաքացիական գիտակցությամբ վարքագծի դրսևորում: